

Քրիստոսի հոգիին հարազատ արժէքները
և անկէ բղխած պարտականութիւնները:

Ն. Ս. Յովհաննէս-ԻԳ. Սրբգ. Պապին
ըսածին համաձայն՝ հարկ է վերցնել այն
բոլոր արդելքները որ քրիստոնեաները ի-
րարմէ կը բաժնեն, և խորհիլ լրջօրէն այն
կէտերուն վրայ՝ որ կրնան զանոնք սերտ
միութեան մը առաջնորդել:

Այս վսեմ զաղափարականին իրակա-
նացման համար՝ հարկաւոր է փոխադարձ
սէր ու յարգանք ոչ միայն անձերու, այլ
նաեւ արժէքներու, որոնք անուրանալի-
րէն կան երկու կողմերուն մէջ ալ: Հար-
կաւոր է մանաւանդ աղօթքը. աղօթք
հասարակաց, եկեղեցիներու մէջ, աղօթք
փոխադարձ սիրոյ և եղբայրութեան
զղացումով օժուել: Հասած է ժամանակը
ալ զաղբեցնելու այն պառակտիչ ու
նախատական պժգալի դրականութիւնը,
որ կ'ուժացնէ հոգիները. հարկ է խոր-
հրդակցական զուգարումներով, եր-
կուսեք ներկայացուցիչներու համաժող-
ովներով, ուսումնասիրութիւններով,
Տիեզերական Ժողովին առնթեր, լրջօ-
րէն զբաղիլ միութեան հարցով, անոր
ներկայացուցած զժուարութիւններով,
պահանջած փոխադարձ զիջումներով,
միշտ բարեացակամ զղացումներով և
Քրիստոսի բաղձանքն իրազօրծելու բու-
ռն տենչանքով:

Կը համարինք թէ միութեան հարցին
համար օգտաւատ ձեռնարկ մը պիտի ըլ-
լայ՝ ծխական զեռնի վրայ զոման աշ-
խատանք մը, մաքրելու համար մեր ծէսը

կարգ մը լատինաւանդ ներմուծումներէ,
որոնք զարերու ընթացքին մուտք դոր-
ծած են:

Տա՛ր Աստուած, որ Շնորհալիի տենչն
ու երազը իրականանար մեր օրերուն, և
նորընտիր Կաթողիկոս Ամենապատիւ Իզ-
նատիոս Պետրոս Ժ. Կարենար կատարել
անզուգական դեր մը՝ այդ ցանկալի միու-
թեան մէջ, և մենք ուրախութիւնն ունե-
նայինք Քրիստոսի սիրոյն և աստուա-
ծային անճառ յայտնութեան լոյսին տակ
միացած տեսնելու բոլոր հայերը: Այդ
օրն իսկապէս — և կը համարինք թէ չի
ուշանար ատիկա — խաղաղութեան և
սիրոյ սուրբ ողջոյնը պիտի ծածանի աշ-
խարհի չորս ծաղերուն ցրուած հայերու
սրտին մէջ, որոնք մէկդի նետած ամէն
բաժանում ու քէն, զիրկընդխառնուած
իրարու պիտի երգեն:

Թշնամութիւնն հեռացաւ

Սէր ընդ հաւուքս սփռեցաւ:

Նորընտիր Կաթողիկոսի զահակալու-
թեան առթիւ, մեր անկեղծ ու որդիական
շնորհաւորութեանց հետ, լաւազոյն մաղ-
թանքներով զեղուն, ահա իզմ մը նուր-
բական, զոր կը պարզենք սիրազեղ ու
խանդավառ զղացումներով, հայցելով Ս.
Հոգիին շնորհները հանուր հայութեան
վրայ, լիովին համոզուած՝ թէ եկեղեցւոյ
միութիւնը Աստուծոյ զործն է ամէնէն
առաջ, որուն մենք հայերս ալ պէտք է
բերենք մեր լայն զործակցութիւնը:

Հ. Ն. Տ. Ն.

ԶԱՐԵՀ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Փետրուարի վերջին օրերն էին՝ երբ
արտասահմանի թերթերուն մահազոյժ
սեւ շերտերը զբաւեցին մեր ուշադրու-
թիւնը. նոյն օրերուն Ս. Ղազար համոզ
ընտանեկան նամակներ ևս եկան հաս-
տատել սարսուղացիլ բոթը:

Զարեհ Ա. ոչ ևս է:

Այս ի՞նչ զժնէ փոթորիկ է որ կը դո-
ռայ Անթիլիասի Աթոռին վրայ, Աստ-
ուած իմ... ի՞նչ մահատարտու թախիծ
է որ կը ծաւալի Անթիլիասի Կաթողիկո-
սարանի զանգերէն:

Զարեհ Ա. ոչ ևս է: Ոչ ևս է պարթե-
ւահասակ կաղնին զօրաւոր, ոչ ևս է Վե-
հափառ Աթոռակալն ու տարաբախտ Կա-
թողիկոսը՝ վշտակիր Զարեհ Ա.:

Ու կայծակի արագութեամբ վիշտը կը
համակէ բովանդակ Պէյրութը, ողէառ-
հրէշտակին թեւերով կը սլանայ ովկան-
ներէն ալ անդին, Մասիսներէն մինչեւ
ծննդավայրն ողբացեալ Հայրապետին՝
մինչեւ Մարաշն ամայի ու կիսակործան:

Արցունքն ու կակիծը կը կարկամեցնէ
բերաններն ամէնուն, մինչ սրտերը կ'ող-
բան մեծ կորուստը երիտասարդ և ա-
ռոյգ Կաթողիկոսին:

Յաւալի լուրը կը հասնի Ս. Ղազար երբ
արդէն հոգին կը յանձնուէին վաստակա-
ւոր ու վշտաբեկ նշխարները Զարեհ Ա.
Կաթողիկոսին, և սուղի թախիծը կ'իջնէ
նաեւ Միթիթարի մենաստանին վրայ:

Միտանութեանս Ընդհ. Արրահայրը
Գերպո՛. Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլու-
հոճեան ցաւակցական նամակով մը կը
փութար իսկոյն իր և Միթիթարեան
Ուլստին վշտակցութիւնը յայտնելու Ան-
թիլիասի Կաթողիկոսարանին, այս անա-
կընկալ ու անդարմանելի կորուստին առ-
ջեւ՝ աղեկործան:

Բօթարեր սեւադրոշմ լրազիրը մեր
ձեռքին մէջ, երեւակայութեամբ վայրկե-
նաբար կը վերջիլէնք մօտաւոր անցեա-
լին մէջէն՝ բնորութեան երկար սրայ-
քարները, օժման առթիւ տեղի ունեցած
վէճերն ու վերիվայրումները, հակառա-
կութիւններ, տարամբժ հոգեբանու-
թեան սեւ զիծեր, նախատական կե-
ցուածքներ, Լիրանանի եղբայրասպան
կոխներ, Սիւրբական զէպքեր... և ա-
հա յանկարծ այդ բոլորը մահուան քրտ-
մընէլի պսակին մէջէն կը բերէին զէմ-
քը Զարեհ Ա. Գահակալին, զոր անդա-
լիօրէն կը կռչէինք վշտակիր Կաթողիկոս:

Ո՛րքան պիտի փափաքէինք, և ո՛րքան
պիտի փափաքէր նաեւ հանգուցեալ Կա-
թողիկոսը եղբայրութեան ուղիին մէջ՝
ազգային ու կրօնական սերտ միութեան
զրօշը պարզուած տեսնել ամէն հայ պա-
տահանի վրայ, հարուստին թէ աղքա-
տին, ու զործել, զործել և շինել հայ
սրտերուն մէջ, հայ վաճառանոցներուն
մէջ, առանց խտրութեան Գահի և Աթո-
ռի, իւրաքանչիւրին արժանաւոր պատիւն

ընծայելով, համեղրայրական սիրոյ մըթ-
նորտի մը մէջ:

Աւա՛ղ...:

Մենք, հեռու քաղաքական եւ կուսակ-
ցական շահերէ եւ հետապնդումներէ, ա-
ռանց միտքելու յարանուանական հողե-
բանութեանց մէջ, երբ անկողմնակալ,
բայց նաեւ ազդանուէր ոգիով կու գանք
դիտել եօթնամեայ կաթողիկոսութեան
այդ տխուր օրերը, ցաւ կը զգանք որ ա-
նոնք ունեցան այդքան սրտաճմրկ սխա-
տութիւն, այդքան խոցոտիչ փուշեր ու
խաչեր... ցաւ կը զգանք մանաւանդ անոր
համար՝ որ այդ պատմութիւնը կը փա-
կուէր այսքան տխուր եւ յուսակոտոր:

Զարեհ Ա. ոչ եւս է:

Մինչ յարգանքով կը խոնարհինք անոր
թաւմ հողակոյտին վրայ, աղօթքի մըր-
մունջ մը մեր սրտին, կը հայցենք որ Ս.
Հոգիին միթիարութիւնը առատօրէն իջ-
նէ Անթիլիասի կաթողիկոսարանին, Միա-
բանութեան ու Դպրեմանքին վրայ եւ
երկնային լոյսերու մէջ հանդէս վշտակիր
Զարեհ Ա. կաթողիկոսը: Շարունակուի
մանաւանդ իր օրով սկսած այն եղբայրա-
կան մտերմութիւնը Արեւմտեքի եկե-
ղեցւոյն հետ, որուն խօսուն վկան եղաւ
Անթիլիասի Դէպք՝ Տիեզերական Ժողովի
առաջին նստաշրջանի ընթացքին՝ Վատի-
կանեան տաճարի փառքերուն մէջ:

Զարեհ Ա. կաթողիկոսի դահակալու-
թեան կարճատեւ տխուր օրերուն վրայ
թող պայծառ եւ յուսալիւ արշալոյսի մը
արուսեակն ըլլայ այդ պատմական դէպ-
քը, որ լուսամիտ եւ բարեացակամ կա-
թողիկոսին լայնախոհ մէկ մտածութիւնն
ու կեցողածքը կը յայտնաբերէ, անոյ
ցոյց մը նետելով անոր ցօղաթուրմ դամ-
բանին վրայ:

* * *

Զարեհ Ա. ծնած էր Մարաշ, կարմիր

թուականի Փետրուարի 14ին: Աւագանի
անունով Սիմոն Փայասեան, սուրի եւ
կրակի մէջէն ճողոպրած, հաղիւ եօթնա-
մեայ, ծնողքին հետ կը զաղթէ հայրենի
տունէն. զաղթականներու առաջին կայա-
նը կ'ըլլայ Համա: 1922ին, ընտանիքին
հետ կը փոխադրուի Հալէպ, ուր կը ստա-
նայ նախնական կրթութիւնը Ազգ. Մե-
րօպեան Վարժարանի եւ Հայկազեան
զարգացման մէջ:

Իր առաջին դաստիարակն էր եղած աք-
սորն ու տառապանքը. եւ ահա այդ կրա-
կի բովէն անցած մանուկը շուտով կը
դառնար ուսումնասէն ու արթնամիտ
պատանի մը:

1930ին կ'աշակերտի Հալէպի Յիսու-
սեանց Բարձր. Վարժարանին: Յաջորդ
տարին զինք կը զտնենք Անթիլիասի նո-
րարաց դպրեմանքի յարկին տակ:

1935ի Յունիս 16ին, փայլուն յաջողու-
թեամբ աւարտած Դպրեմանքի ուսում-
նական հնդամեայ շրջանը, կը ձեռնա-
դրուի արեւոյ՝ Զարեհ անունով: Անթի-
լիասի կաթողիկոսարանին առաջին հունձ-
քն էր, ուրախութեան ժպիտներով եւ
յոյսերով պատարուն:

Յաջորդաբար, տարի մը կը վարէ կա-
թողիկոսարանի անմիջական հսկողու-
թեան տակ բացուած Մեսրոպեան Ման-
կապարտէզ-նախակրթարանի տեսչու-
թեան պաշտօնը: Միաժամանակ կը պա-
տաստէ իր վարդապետական աւարտա-
ճառը, ընդարձակ ուսումնասիրութիւն
մը՝ Յովհաննէս Ոսկերեանի «Մատթէի
Մեկնութեան» մասին, ցարդ անտիպ:

1936-1938, որպէս Նուպարեան սան,
կը հետեւի Պրիւքսէլի համալսարանին
Բիւզանդալոգիոսութեան եւ Արեւելագիտու-
թեան մասնաճիւղերուն, բարեկամական
մտերիմ յարաբերութիւն մշակելով Փրոֆ.
Ն. Ազոնցի հետ:

Վերադառնալով Անթիլիաս, 1939ի ըս-



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԶԱՐԵՀ Ա.

կիրցները, կաթողիկոսարանի կողմէ կը
նշանակուի խնամատար Պատիթի, Թար-
թուսի, Թրիփոլի մէջ ապաստանած հայ
զաղթականներուն, որոնք Սանճաքի պար-
պոնտին հետեւանքով դուրս նետուած էին
իրենց հայրենի երգիքներէն:

1940ին, երիտասարդ Վարդապետը կը
ստանձնէ Հալէպի թեմին Առաջնորդական
Տեղապահութեան բարձր պաշտօնը, եւ
շուտով Առաջնորդարանին շուրջ կը խմ-
բէ բոլորին աչքերն ու հոգին՝ բարի եւ
ուղղամիտ իր վարքով, անաչառ եւ ան-
յիշատի իր բնավորութեամբ, պարկեշտ
եւ անբասիր իր նկարագրով:

1942ին կը ստանայ ծայրագոյն Վարդա-
պետութեան աստիճանը:

1943ին կ'ընտրուի Առաջնորդ Հալէպի:
1946ին կը ձեռնադրուի Եպիսկոպոս:
Բազմամեայ Առաջնորդութեան շրջանին,
Զարեհ Սրբազան կը ստանայ մեծ ժողո-
վրդականութիւն: Նախ Սիւրիոյ ազա-
տագրութեան շրջանին՝ յստակատես քա-
ղաքականութեամբ կը յաջողի հայ ժողո-
վուրդի զաւակները խմբել տեղացի ժո-
ղովուրդի կողքին. կ'արժանանայ Սիւ-
րիական Արժանիքի Ա. կարգի շքանշա-
նին: Ազգային գեանի վրայ, հայապահ-
պան մշակոյթի ի նպաստ մեծ ջանք կը

Թափե՛ք քաջալերանքով, հայրական յոր-
դորներով ու կազմակերպչական ձեռ-
նարկներով: Ուսումնական խորհուրդի
կազմաւորումը, ուսումնական ընդհանուր
ծրարի մշակումը եւ զործադրութիւնը,
հոսկ Բարէն-Էփրէ՛ ձեռնարանի բացումը
իր անդուլ վաստակին պատկենն են: Հա-
կառակ պետական սեղմումներու, մեծ
աշխատանքով կը յաջողէր, ուրիշ յարա-
նունութեանց հետ միացած, ձեռք ձգել
որոշ առանձնաշնորհումներ, ի նպաստ
հայ լեզուին ու պատմութեան զարգաց-
նութեանց:

Մասնաւոր համակրանք ու յարգանք կը
տածէր հանդէպ Մխիթարեան Հաստա-
տութեան եւ անոր Ժիր մշակներուն. յա-
ճախակի փոխադարձ այցելութիւններով
մտերմական սերտ շրջանակ մը կը ստեղ-
ծուէր երկուստեք. մտերմութիւն եւ սէր,
զոր Զարեհ Սրբազան կը մշակէր նաեւ
իր Կաթողիկոսութեան շրջանին, ու փա-
փաք ալ յայտնած էր Եւրոպա կատարելիք
իր այցելութեան առթիւ՝ անպատճառ
անցնիլ Ս. Ղազարէն: Ուրախութեամբ
լսած էինք այդ բոլոր եւ կ'ակնկալէինք
այդ երջանիկ հանդիպումին:

Աւագ, այդ երջանիկ օրուան արեւը ալ
պիտի չծաղի, ու վշտակիր Կաթողիկոսը
իր դամբանին խորէն պիտի երազէ Ս. Ղա-
զարի խաղաղ նոճիները:

1952-1956 թափուր կը մնար Մեծի Տա-
նին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահը,
Գարեգին Յովսէփեանցի մահէն ի վեր:

Նոր Կաթողիկոսի ընտրութիւնը, ինչ-
պէս ծանօթ է ամէնուն, տեղի ունեցաւ
տիտը պարագաներու տակ, 1956ի Փե-
տրոստ 20ին. նմանապէս կաթողիկո-
սական օծումը, նոյն տարուան Սեպտեմ-
բեր 2ին: Եւ այդ տիտը պարագաները
չարունակեցին դոյատեւել, հակառակ
Կիլիկիան Աթոռին հետզհետէ հաստատ-

ման, բարդաւաճման՝ թիւով եւ կազմա-
կերպութեամբ, ծաւալման՝ նորանոր
թեմերու յաւելումով, ներքին կազմա-
կերպութեան՝ զպրեկանքի ծաղկումով եւ
ուսումնական ու հոգեւորական վերել-
քով:

Անշուշտ մեղի չ'իյնար այստեղ իրաւա-
բարի դեր կատարել. սակայն չենք կրնար
չանտեսել — եւ այս կը յուզէ մեզ — հան-
դուցեալ Զարեհ Ս. Կաթողիկոսի անյի-
շաշար ու ներողամիտ ընթացքը ամէնուն
հանդէպ, զերամեծար յարգանքը էջ-
միածնի Աթոռին եւ Անոր Գահակալին
հանդէպ, եզրայրական կեցումները Պատ-
րիարքական միւս աթոռներուն հանդէպ.
Եւ ասիկա կրնայ ըլլալ վշտակիր Կաթո-
ղիկոսին մեծագոյն պարծանքը:

Իսկ համա-եկեղեցական շրջանակներու
մէջ անմոռանալի պիտի մնայ իր տա-
ծած մտերմական յարաբերութիւնը եկե-
ղեցական տարրեր եւ նոյնիսկ օտար յա-
րանունութեանց հետ. ի մասնաւորի,
իր օրով, Հայ Կաթողիկէ Նաւերապետու-
թեան հետ փոխադարձ ցոյց տրուած սի-
րոյ եւ յարգանքի զեղուն զղացումները:

Տիեզերական Ժողովին զրկուած Դէտը,
յատուկ հրաւերի վրայ, կարճէք կու դար
նորոգելու դարաւոր աւանդութիւն մը՝
որ զոյութիւն ունեցած է Կիլիկիան Աթո-
ռին եւ Հոսմի Հովուապետին միջեւ, ԺԲ.
դարէն տողին:

Ի՞նչ յօյսեր ու ակնկալութիւններ...:

Ու մինչ յարգանքով կը խոնարհինք Ն.
Ս. Օ. Տ. Տ. Զարեհ Ս. Կաթողիկոսի
Եւրոպ հոգակոյտին վրայ, ազօթք մը ու-
նինք սրտապին, որ հետզհետէ յորդին ու
ամբողջունին, զօրանան այս մտերմա-
կան յարաբերութիւնները, ի պայծառու-
թիւն Գրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն եւ
Հայ Ազգին:

Հ. Ն. Տ. Ն.

ԿԱԹՈՂԻԿԷ ԹՈՒՂԹԵՐՈՒ

ԲՍԲԱԳԻՐ ՄԵԿՆՈՒԹԵՐՆ

(Շար. տես «Բազմավեպ» 1962, ք. 6-8, էջ 125)

Ե.

ՆԱԽԱԳԻՐԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկէ թուղթերու խմբագիր մեկ-
նութեան թարգմանչին, եւ նոյն մեկնու-
թեան Միաբանութեան մատենադարանին
զրչագիրներուն վրայ համառօտ ծանո-
թութիւն տալէ ետք, նախընթաց Գ. եւ Դ.
հատուածներով, երբ կը բանանք այդ ձե-
ռագիրները, նախ եւ առաջ կը հանդի-
պինք իւրաքանչիւր առաքելական թուղ-
թի սկիզբը զրուած. նախադրութիւննե-
րու, իրր ամփոփում մը թուղթին: Կ'ար-
ժէ քանի մը խօսք անոնց մասին:

Աստուածաշունչի Նախադրութիւնները
Ժամանակաւ ուսումնասիրած է Հ. Գ.
Զարրանայեան¹. Իսկ Կաթողիկէ խմբա-
գիր մեկնութեան նախադրութիւններու
մասին զրած է Բարբէն Սրբազան, զէմ
առ զէմ համեմատելով Յակոբ Առաքելի
թուղթին նախադրութիւնը՝ Աստուածա-
շունչի Զահրապեան ազգայնութեան հետ,
նշանակելով տարբերութիւնները²:

Սակայն, Յակոբու թուղթի նախա-
դրութենէն առաջ, մատենադարանիս թ.
951 ձեռագիրը, զրուած 1335ին, ունի
Յառաջաբան մ'ալ, որ կը պակսի մեր
խմբագիր մեկնութեան բոլոր միւս օրի-
նակներուն մէջ. հոն կը խօսի Ա. Կաթո-
ղիկէ եօթը թուղթերու զրութեան պատ-
ճառին, Բ. Թէ ինչո՞ւ այս թուղթերը Կա-

թողիկէ կոչուած են, եւ Գ. Թէ ինչո՞ւ
Յակոբայ թուղթը նախադասուած է: Այս
Յառաջաբանը բոլորովին տարբեր է Աս-
տուածաշունչի եօթը թուղթերու սկիզբը
հրատարակուած Յառաջաբանէն, ուստի
ամբողջութեամբ կը հրատարակեմ ի վերջ
զրութեանս:

Ինչպէս Յակոբայ՝ այսպէս եւ Պետրոսի
Ա. եւ Բ. թուղթերու Նախադրութիւնները
խմաստով կը համաձայնին Աստուածա-
շունչի Նախադրութիւններուն. յայտնի է
որ Մեկնութեան թարգմանչը ուղած է
նոր թարգմանութիւն մը տալ, եւ տեղ
տեղ աւելի պայծառ է քան Աստուածա-
շունչի մէջ եղածը:

Իսկ Յովհաննու Ա. թուղթին Նախա-
դրութեան մէջ թէպէտ նոյն կը մնայ ի-
մաստը, սակայն տարբերութիւնները ա-
ւելի զգալի են: Ընդհակառակն Յովհան-
նու Բ. թուղթը իմաստով ալ կը զանա-
գանուի. օրինակի համար, խմբագիր մեկ-
նութեան մէջ՝ զրիչը կը համարի թէ
Կիւրիա խորհրդանիշ մ'ըլլայ Եկեղեցւոյ,
կամ ըստ այլոց՝ իրական բարեպաշտ կին
մը, որ իր տունը ազօթալայրի վերածած՝
հոգեւորապէս կը կառավարէ որդիները:
Կը տարբերի նոյնպէս Գ. թուղթի Նախա-
դրութիւնը, մինչդեռ Յուդայիներ կը զու-
ղընթանայ քիչ շատ Աստուածաշունչի.
միայն մեկնութեան նախադրութիւնը ա-
ւելի երկար է վերջաւորութեան:

1 Մանգրե. Հայկ. Թարգ. 1889, էջ 171-180:

2 Հնդ. Ամս. 1915, էջ 76: